**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 28.06.2019թ.
ժամը 11:50

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**

ՀՀ ՊՆ ԿՇ և ՁԲ վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյանը,

**գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ ԿՇ և ՁԲՎ ՁԲՓԿԾ պետ Ա. Պապյանը,

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Մ.Ամիրյանը

**Բացակայում է ՀՀ ՊՆ ԿՇ և ՁԲՎ ՁԲՓԾ առաջատար մասնագետ Ռ.Չաթոյանը:**

***«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

(Մ.Ամիրյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված համապատասխան տեղեկատվության քննարկման և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:*

***1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված համապատասխան տեղեկատվության քննարկման և ընտրված մասնակցին հայտարարելու մասին***

(Մ.Ամիրյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ «Հայկ Մարտիրոսյան» Ա/Ձ-ի կողմից 38-րդ չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկում առկա է անհամապատասխանություն՝ աղյուսակի 3-րդ և 5-րդ սյունակներում նշված գումարններում տառերով և թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, 2 417 000/ **երկու միլիոն չորս հարյուր տասնվեց/:**

Հիմք ընդունելով սույն ընթացակարգի հրավերի 5-րդ մասի 5.2 կետը, հանձնաժողովը հիմք ընդունեց մասնակցի կողմից ներկայացված գինը՝ տառերով արտահայտված /**երկու միլիոն չորս հարյուր տասնվեց/:**

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի **26.06.2019թ.**-ին տրամադրած՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման մասին տեղեկատվության համաձայն **«Հայկ Մարտիրոսյան» Ա/Ձ**-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի **12 000 /տասներկու հազար/ ՀՀ** դրամ ժամկետանց պարտավորություն՝ ինչը չի գերազանցում մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի /**3 912 000 ՀՀ դրամ**/ մեկ տոկոսը և օրենքով նախատեսված շեմը, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող:

**Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով չի քննարկվել (գնահատվել):**

24.06.2019թ-ին գնումների համակարգող Մ.Ամիրյանը Armeps.am համակարգի միջոցով ծանուցեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում և կարգով /3 աշխատանքային օրվա ընթացքում/ ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ m.amiryan@mil.am էլեկտրոնային հասցեին: Սահմանված ժամկետում մասնակիցը ուղարկել է վերը նշված փաստաթղթերը: Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պայմաններին:

1.2 **28.06.2019թ.** հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների որակավորման չափորոշիչները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-

ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով գնանաշման հարցման ընթացակարգի իրավերի պահանջներին, **«Հայկ Մարտիրոսյան» Ա/Ձ-ին** հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից՝ սույն ընթացակարգի 38-րդ և 39-րդ չափաբաժինների մասով և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել ընթացակարգի բոլոր ընտրված /հաղթող/ մասնակիցներին:

Ընդունել ի գիտություն, որ **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28»** ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի **18.06.2019թ.** թիվ 1.2 որոշմամբ սույն ընթացակարգի մնացած չափաբաժիններում ընտրված /հաղթող/ մասնակիցներ էին ճանաչվել հետևյալ կազմակերպությունները. /համաձայն ստորև ներկայացվող աղյուսակի/,

| Չ/հ | ընտրված /հաղթող/ կազմակերպություն |
|---|---|
| 20, 46 | «ԲԱՐՍԻՍ» ՍՊԸ |
| 32, 36, 49 | «Բեսթ Գրուպ» ՍՊԸ |
| 1, 6, 7, 8, 19, 33, 40 | «Էքսպրես Շին» ՍՊԸ |
| 22 | «Էֆֆեկտ Գրուպ» ՓԲԸ |
| 5, 9, 11, 16, 21, 26, 37 | «Հիդրո Գրուպ» ՍՊԸ |
| 38. 39 | «Հայկ Մարտիրոսյան» Ա/Ձ |
| 45 | «Նաիրի Թորոսյան» Ա/Ձ |
| 15 | «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ |
| 17, 28, 29, 30, 34, 35, 41, 44, 48, 50 | «Սևադա Ծատուրյան» ԱՁ |
| 2, 3 | «ՍՅ.ՌՈՒ.ՄԱ» ՍՊԸ |
| 31 | «Վոլոդյա Նիկողոսյան» Ա/Ձ |
| 14, 27 | «ՕԲՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ |
| 4, 10, 12, 24, 43, 47 | «Օստինատո» ՍՊԸ |

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28»** ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:*

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Մ.Ամիրյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը $12^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2 դեմ՝ 0:*

Գնահատող (ԳԱՊ) ______ Ա. Մուրադյան

Գնահատող ______ Ա. Պապյան

Գնումները համակարգող ______ Մ.Ամիրյան